



վերականգնման և ամրակայման, կարասային սրահի մասնակի վերականգնման, ուրարտական խոհանոցի և ենթակառուցվածքների ստեղծման, ամֆիթատրոնի և սպասարկման սրահի կառուցման էսքիզային նախագծերը, անալոզներ ցուցադրել ուրարտական և հետուրարտական շրջանի հնավայրերից: Նախագծի ներկայացման ընթացքում եղել են որոշ առաջարկություններ և դիտարկումներ էսքիզային նախագծերի վերաբերյալ, որոնք մասնագիտորեն ուսումնասիրվելուց հետո, առաջիկայում կարող են ընդգրկվել աշխատանքային նախագծերում:

Երևանի քաղաքապետարանի կողմից որոշվել է ընթացք տալ «Էրեբունի հնավայրի միջնաբերդի մասնակի վերականգնման և այցելուների սպասարկման արդիականացման նախագծին»՝ սահմանված կարգով: Այսպիսով, նախագծի առաջին փուլը հիմք է հանդիսանում «Էրեբունի» միջնաբերդի վերականգնման աշխատանքները սկսելու համար, որոնց մեկնարկը, ըստ էության, կտրվի այս տարի: